Յուրաքանչյուր երեխայի համար՝

Ով էլ նա լինի,
Որտեղ էլ ապրի:
Յուրաքանչյուր երեխա արժանի է մանկության,
Ապագա ունենալու,
Արդար և հավասար հնարավորությունների:
Հենց այդ պատճառով էլ կա ՅՈՒՆԻՍԵՖ-ը:
Աշխատելով զոր ու գիշեր՝
190 երկրներում և տարածքներում:
Հասնելով անհասանելիներին,
Աջակցությունից ամենահեռու գտնվողներին,
Ամենամեկուսացվածներին:
Դա՛ է պատճառը, որ մենք մնում ենք մինչև վերջ
Եվ երբեք չենք հանձնվում:

unicef

յուրաքանչյուր երեխայի համար

9 789939 702766

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ՀԻՄՆԵԼ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Համայնքների ֆինանսիստների միավորում

unicef

յուրաքանչյուր երեխայի համար

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ՀԻՄՆԵԼ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ | 2018

Խմբագիր՝

Դավիթ Մարգարյան

Համայնքների ֆինանսիստների միավորում
փորձագետ

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել կարիքավոր և խոցելի երեխաներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել՝ www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

Facebook.com/UNICEFArmenia

Instagram.com/UNICEF_Armenia

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), 2018թ.
© ՀՖՄ, 2018թ.

ISBN 978-9939-70-276-6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ..... **4**

ՆԱԽԱԲԱՆ **5**

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐ..... **11**

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԸ.....**17**

ՔԱՅԼ 1. Համայնքի կողմից այլընտրանքային նախադպրոցական ուսուցման կարիքի գնահատում դիտարկվող բնակավայրում.....17

ՔԱՅԼ 2. Բնակավայրում ծառայությունը մատուցելու շենքային պայմանների և դրանց օգտագործման հնարավորությունների գնահատում.....18

ՔԱՅԼ 3. Դիտարկվող բնակավայրում հանրային քննարկման կազմակերպում.....19

ՔԱՅԼ 4. Ծառայության մատուցման գործընթացի նախապատրաստական փուլ.....24

ՔԱՅԼ 5. Համայնքի ավագանու նիստի անցկացում.....27

ՔԱՅԼ 6. Համայնքի ավագանու որոշումների կիրարկում և բնակավայրում նախադպրոցական կրթության ծառայության հիմնում.....31

ՔԱՅԼ 7. Ծառայության գործարկում բնակավայրում..... 32

ՔԱՅԼ 8. Մոնիթորինգի իրականացում..... 34

ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Ներդիր 1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք..... 11

Ներդիր 2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք..... 12

Ներդիր 3. ՆԿԴ այլընտրանքային ծառայության առանձնահատկությունները.....13

Ներդիր 4. Մոդելի ծախսարդյունավետության համառոտ նկարագիրը.....14

Ներդիր 5. Ծրագրի ազդեցությունը ՆՈՒՀ-երում երեխաների ընդգրկվածության աստիճանի վրա.....15

Ներդիր 6. ՆԴԿ այլընտրանքային ծառայությունում սնունդի մատուցման Սիսիանի փորձը.....19

Ներդիր 7. Շինության և տարածքի անվտանգության ապահովում.....20

Ներդիր 8. ՄԱԶԾ ԳԷՀ ՓԴԾ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հաջողված համագործակցության օրինակ.....22

Ներդիր 9. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք.....26

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՆԴԿ	Նախադպրոցական կրթություն
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն
ՎՄԶ	Վաղ մանկության զարգացում
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՀՀ ԿԳՆ	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՀԶԾ	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր
ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
ՏՍԾ	Տեղական սոցիալական ծրագիր
ՓԴԾ	Փոքր դրամաշնորհների ծրագիր

ՆԱԽԱԲԱՆ

Կրթությունը պետության սոցիալական ոլորտի կարևորագույն ենթահամակարգերից մեկն է, քանի որ այն նպաստում է մարդկային կապիտալի ձևավորմանը և տնտեսության զարգացմանը:

Պետությունը երաշխավորում է երեխայի կրթություն ստանալու իրավունքի իրացումը հիմնարար գիտելիքի, ունակությունների և կարողությունների ձեռքբերման շարունակական գործընթացում, ինչը պահանջվում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայով և ամրագրված է «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ում: Ըստ սահմանված դրույթների՝ նախադպրոցական կրթությունը կարող է նպաստել երեխաների զարգացման և սնուցման միջոցով աղքատության ու զրկանքների հաղթահարմանը, իսկ առանձին ենթանպատակներ ամբողջությամբ վերաբերում են բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության (ՆԴԿ) ծառայությունների և վաղ մանկության զարգացման (ՎՄԶ) հավասարապես հասանելի և մատչելի հնարավորությունների ապահովմանը՝ նպաստելով հետագայում մարդկային ռեսուրսների և երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

© UNICEF Armenia/2018/Makhasyan

Կրթության իրավունքի իրացումը, կրթական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը հավասարապես կարևոր են նախադպրոցական և լրացուցիչ կրթության տիրույթներում, քանզի անհատի զարգացումը սկսվում է հենց վաղ մանկությունից և այս կամ այն կերպ շարունակվում ողջ կյանքի ընթացքում:

Կրթական համակարգի առաջնային օղակը նախադպրոցական կրթությունն է, որի նպատակն է բարելավել ծննդից մինչև 6 տարեկան երեխաների իմացական, ֆիզիկական, հուզական և սոցիալական զարգացումը, ապահովել տարրական կրթության սահուն անցումը:

Նախադպրոցական կրթությունում երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակը գլխավորապես պայմանավորված է գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության հաստատությունների բացակայությամբ կամ դրանց առկայության դեպքում՝ չշահագործմամբ, վատ վիճակի կամ ռեսուրսների պակասի պատճառով:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում նախադպրոցական տարիքի (0-5) երեխաների 28.9%-ն է օգտվում տվյալ ծառայությունից: Վիճակը էլ ավելի վատթար է հենց գյուղական բնակավայրերում, որտեղ երեխաների միայն 17.2%-ն է հաճախում մանկապարտեզ:

Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումների համատեքստում առաջ քաշվեց նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքների գյուղական բնակավայրերում ՆԴԿ ապահովման հարցը: Վերջինս ուղղակիորեն պայմանավորված էր խոշորացված համայնքների ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմամբ, ինչի արդյունքում առաջացավ բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնման հնարավորություն:

Հաշվի առնելով երեխաների ՎՄԶ-ան և փոքր բնակավայրերում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման կարևորությունը՝ բնակիչներին մատուցվող ծառայությունների ցանկից առաջնահերթություն է տրվել բնակավայրերում ՆԴԿ ապահովմանը: Վերջինս հանդիսանում է համայնքի պարտադիր խնդիր և համայնքի ղեկավարի կողմից իրականացվող սեփական լիազորություն:

Ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է դառնում, որ ՆԴԿ այլընտրանքային մոդելների ներդրումը մեծապես կարևորվում է Հայաստանի

Հանրապետությունում, մասնավորապես՝ համայնքների փոքր բնակավայրերում, որտեղ ինչպես երեխաների թվաքանակը, այնպես էլ համայնքային միջոցները չեն բավականացնում ավանդական մանկապարտեզներ գործարկելուն և պահպանելուն:

Ուստի, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՆԴԿ ծառայության գործող տարբերակը, որը ներառում է նաև երեխայի խնամքը և սնունդը, պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ, խնդիր դրվեց հնարավոր դարձնել սահմանափակ ռեսուրսներով նշված ծառայության մատուցումը փոքր բնակավայրերում:

Նշված խնդրին ընդառաջ՝ մեկնարկեց Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) գրասենյակի կողմից ֆինանսավորվող «Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների աջակցություն փոքր բնակավայրերում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի շրջանակներում մշակվեց ՆԴԿ մատուցման այլընտրանքային մոդել, որը փորձարկվեց «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի կողմից Սյունիքի մարզի 8 համայնքներում: Փորձարկված ծրագիրը հաջող էր, մշակված մոդելը՝ ծախսարդյունավետ, ինչի շնորհիվ էլ գտել է իր տեղը ՀՀ կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) կողմից ընդունված ՆԴԿ այլընտրանքային մոդելների ցանկում:

Այնուհետև, հենվելով առկա փորձի վրա և հաշվի առնելով խոշորացված համայնքների առանձնահատկությունները, մոդելը լրամշակվեց և բարեփոխված բովանդակությամբ գործարկվեց Լոռու մարզի Թումանյան խոշորացված համայնքի 4 գյուղական բնակավայրերում: Ըստ մոդելի բարեփոխված տարբերակի՝ ծառայության հիմնման նախապայման է հանդիսանում բազմաբնակավայր համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատության (ՆՈՒՀ) առկայությունը:

Սույն ձեռնարկը կազմվել է Համայնքների ֆինանսիստների միավորման կողմից՝ հիմնվելով մշակված մոդելի, դրա կյանքի կոչման ընթացքում կուտակած փորձի, ըստ այդմ մշակված՝

- «Ինչպես հիմնել այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ ՀՀ փոքր համայնքներում» (մշակվել է «Քայլ առ Քայլ» բարեգործական հիմնադրամի կողմից),
- «ՀՀ բազմաբնակավայր համայնքում նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայությունների ֆինանսավորման մոդելը»,
- «Ծախս-օգուտ վերլուծություն. Հայաստանի խոշորացված համայնքներում նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայությունների մոդելի ներդրման վերաբերյալ» զեկույցի,
- «Այլընտրանքային նախադպրոցական կրթության մոդելի պիլոտային կիրառման իրավական վերլուծություն» փաստաթղթերի, ինչպես նաև համայնքների խոշորացման արդյունքում ընձեռնված հնարավորությունների վրա:

Ձեռնարկը ներկայացնում է Ծրագրի շրջանակներում վերոգրյալ փաստաթղթերում ներառված քայլերի համառոտ նկարագիրը: Այն բաղկացած է 8 քայլերից, որոնք նախանշում են համայնքի ղեկավարի կողմից ծառայության հիմնման համար անհրաժեշտ գործողությունների հաջորդականությունը:

Դրանք են՝

- Համայնքի կողմից այլընտրանքային նախադպրոցական ուսուցման կարիքի գնահատում դիտարկվող բնակավայրում,
- Բնակավայրում ծառայությունը մատուցելու շենքային պայմանների և դրանց օգտագործման հնարավորությունների գնահատում,

- Դիտարկվող բնակավայրում հանրային քննարկման կազմակերպում,
- Ծառայության մատուցման գործընթացի նախապատրաստական փուլ,
- Համայնքի ավագանու նիստի անցկացում,
- Համայնքի ավագանու որոշումների կիրարկում և բնակավայրում նախադպրոցական կրթության ծառայության հիմնում,
- Ծառայության գործարկում բնակավայրում,
- Մոնիթորինգի իրականացում:

Իրականացվող քայլերը և ՆԴԿ այլընտրանքային ծառայության ներդրմանը վերաբերող այլ խնդիրներ առավել մանրամասնորեն ներկայացված են վերը նշված փաստաթղթերում, ուստի մեծապես խորհուրդ է տրվում ծանոթանալ նաև դրանց:

Վերոնշյալ փաստաթղթերը, ինչպես նաև ՆԴԿ այլընտրանքային ծառայության ներդրմանը վերաբերող այլ նյութեր տեղակայված են սույն Ուղեցույցին կից **CD սկավառակում:**

© UNICEF Armenia/2018/Osipova

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐ

Կրթությունն իր բոլոր մակարդակներով պետության սոցիալական ոլորտի կարևորագույն ենթահամակարգերից է, որն ապահովում է կրթության բնագավառում մարդու իրավունքների իրացումը՝ որպես համակարգված գիտելիքների, ունակությունների և կարողությունների ձեռքբերման շարունակական գործընթաց:

Երկրի կրթական համակարգի առաջնային օղակը երեխաների ՆԴԿ է, որի նպատակն է բարելավել ծննդից մինչև 6 տարեկան երեխաների ճանաչողական, ֆիզիկական և սոցիալական զարգացումը:

ՀՈԴՎԱԾ 6. Նախադպրոցական կրթության նպատակները և խնդիրները

1. Նախադպրոցական կրթության նպատակներն են՝

- երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը.
- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը.
- դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

Ներդիր 1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, 12.12.2013թ. խմբ.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ***նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը*** հանդիսանում են համայնքի պարտադիր խնդիրներից մեկը: Նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, միտված լինելով լուծելու վերը նշված համայնքի պարտադիր խնդիրը, սահմանել է, որ համայնքի ղեկավարը կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում:

ՀՈԴՎԱԾ 12. Համայնքի պարտադիր խնդիրները

1. Համայնքի պարտադիր խնդիրներն են՝

4) նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.

ՀՈԴՎԱԾ 46. Համայնքի ղեկավարի լիազորությունները կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

1. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.
1) կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.

Ներդիր 2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 16.01.2018թ. խմբ.

Ըստ այդմ՝ համայնքային իշխանությունները պետք է իրականացնեն համայնքում ՆԴԿ ծառայության մատուցումը:

Սակայն ՆԴԿ մատուցման գործող համակարգը շատ համայնքների համար հասանելի չէ, քանի որ վերջինս պահանջում է զգալի դրամական միջոցներ, հատուկ շենքային պայմաններ և որակյալ դաստիարակչական կազմ: Ասվածն առավել քան արդիական է փոքր համայնքների դեպքում, որտեղ երեխաների թիվը քիչ է, առկա են դրամական միջոցների սղություն, բացակայում են բավարար հարմարություններով և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան շենք-շինությունները, ինչպես նաև չկան մասնագիտական պատրաստվածություն ստացած դաստիարակներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է ներկայացված այլընտրանքային մոդելը, որը կոչված է տեղական իշխանությունների համար ստեղծել հնարավորություն՝ մատուցել ՆԴԿ ծառայությունը առկա որոշ խոչընդոտների պայմաններում:

ՆԴԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

- ծառայությունը կարճօրյա է՝ 3-4 ժամ,
- ծառայությունն ընդգրկում է միայն երեխաների կրթության և զարգացման կազմակերպումը,
- ծառայությունը չի ընդգրկում երեխայի սննդի և քնի կազմակերպումը,
- խումբը փոքր է՝ երեխաների թիվը չպետք է գերազանցի 15-ը,
- առանձին տարիքային խմբեր /կրտսեր, միջին, ավագ/ չկան, նախատեսված է 3-ից 6 տարեկանների համար, և ձևավորվում է տարատարիք մեկ խումբ,
- ծառայության գործարկման համար նոր ՀՈԱԿ ձևավորելու անհրաժեշտություն չկա՝ հիմնվում է գործող ՆՈՒՀ-ի վրա,
- աշխատում է մեկ դաստիարակ, որը վերապատրաստված է և գիտի ինչպես աշխատել տարատարիք խմբերում,
- ծառայության գործարկումը մեծ ֆինանսական միջոցներ չի պահանջում,
- ծառայության հետագա շարունակական մատուցումը ծախսարդյունավետ է:

Ներդիր 3. ՆԿԴ այլընտրանքային ծառայության առանձնահատկությունները

Առաջարկվող մոդելի դեպքում ծառայությունները կարճօրյա են՝ 3-4 ժամ տևողությամբ: Երեխաները հաճախում են մանկապարտեզ մի քանի ժամով, և կախված երեխաների տարիքից՝ նրանց հետ կազմակերպվում են 2-3 հստակ կառուցվածքով պարապմունքներ, դիտումներ, զբոսանք և տարբեր խաղեր:

Մոդելն աչքի է ընկնում ցածր ծախսատարությամբ, ինչպես նաև տեխնոլոգիական և տնտեսական արդյունավետությամբ՝ ապահովելով օգուտ-ծախս հարաբերակցության և ներդրումների հետգնման բարձր մակարդակ: Այն ֆինանսական առումով նույնպես ծախսարդյունավետ է, հնարավորություն է տալիս ՆԴԿ-ն ապահովել ավելի փոքր տարածքների, գույքի և մարդկային ռեսուրսների օգտագործմամբ, ինչը, նվազեցնելով ծառայությունների մատուցման հետ կապված պահպանման և այլ ընթացիկ ծախսերը, մեծացնում է դրանց օգտագործման արդյունավետությունն ու հատույցը:

Մոդելի գործունեության առաջին տարվա համար, ըստ Աթան, Ահնիձոր և Շամուտ բնակավայրերի փաստացի տվյալների, մեկ երեխայի հաշվով ներդրման միջին ուղղակի ծախսը կազմել է մոտավորապես **967.0** հազար ՀՀ դրամ, որից **442.0** հազար ՀՀ դրամը կամ **45.7%**-ը կազմել են կապիտալ ծախսերը (մեկ երեխայի հաշվով ընդհանուր ծախսը առաջին տարվա համար կազմել է **1,391.9** հազար ՀՀ դրամ):

Մոդելի գործունեության առաջին 5 տարիների ընթացքում կրթական ծառայություններից օգտված երեխաների թվաքանակը կգերազանցի 100-ը, իսկ մեկ երեխայի հաշվով մոդելի ներդրման ընդհանուր և ուղղակի միջին ծախսերը կկազմեն, համապատասխանաբար՝ **320.1** և **222.5** հազար ՀՀ դրամ:

Տարածքի չափից ու երեխաների թվաքանակից բացի, կան գործոններ, որոնք նշանակալի ազդեցություն ունեն կանխատեսվող ծախսերի չափի վրա, դրանք տարածքի ֆիզիկական վիճակը և վերանորոգման համար պահանջվող շինմոնտաժային աշխատանքների ծավալն ու շինանյութերի արժեքն են:

Ներդիր 4. Մոդելի ծախսարդյունավետության համառոտ նկարագիրը[1]

ՆԴԿ ծառայությունների այլընտրանքային կիրառված մոդելը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել և՛ աշխատուժի, և՛ կապիտալի ֆիզիկական ծավալներն ու դրանց վրա կատարվող ծախսերը: Ավանդական ձևաչափի հետ համեմատությամբ՝ միայն աշխատուժի մասով Մոդելի տեխնոլոգիական արդյունավետությունը գնահատվում է 5 անգամ (նույն ծավալով ծառայությունը մատուցելու համար ներգրավված աշխատակիցների հարաբերակցությունը կազմել է 5/1):

[1] Աղբյուր՝ Ծախս-օգուտ վերլուծություն Հայաստանի խոշորացված բազմաբնակավայր համայնքներում նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայությունների մոդելի ներդրման վերաբերյալ, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2018թ.

Մոդելը հնարավորություն է տվել լուծել ՆԴԿ ծառայությունների հասանելիության և մատչելիության խնդիրը փոքր բնակավայրերի երեխաների համար: Մասնավորապես, Թումանյան համայնքի չորս բնակավայրերի երեխաների համար գործող ՆԴՀ-ների հեռավորությունը, մինչ մոդելի իրականացումը, կազմում էր ավելի քան 20 կմ և, փաստորեն, հասանելի ու մատչելի չէր: Այժմ նրանց համար ապահովված է ՆԴՀ-ների նվազագույն հնարավոր հեռավորությունը՝ 0-1 կմ:

2016 թվականի ցուցանիշները հիմք ընդունելով՝ մոդելի իրականացման արդյունքում Լոռու մարզում **1.1%**-ով աճել է մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակը և **0.4** տոկոսային կետով՝ մանկապարտեզներում երեխաների ընդգրկվածության աստիճանը:

Ներդիր 5. Ծրագրի ազդեցությունը ՆՈՒՀ-երում երեխաների ընդգրկվածության աստիճանի վրա[2]

[2] Աղբյուր՝ Ծախս-օգուտ վերլուծություն Հայաստանի խոշորացված բազմաբնակավայր համայնքներում նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայությունների մոդելի ներդրման վերաբերյալ, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2018թ.

© UNICEF Armenia/2018/Malkhasyan

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԸ

ՔԱՅԼ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

- Տարիքային թիրախային խմբի երեխաների թվի ճշտում
- Տարիքային խմբերում երեխաների թվի ճշտում

Այլընտրանքային ՆԴԿ ծառայություն հիմնելու առաջին քայլը բազմաբնակավայր համայնքի յուրաքանչյուր բնակավայրում նախադպրոցական տարիքի երեխաների թվի ճշգրտումն է: Անհարժեշտ է հստակեցնել ինչպես թիրախային տարիքի (3-6 տարեկան) երեխաների թիվը՝ ըստ տարիքային խմբերի, այնպես էլ մինչև 6 տարեկան երեխաների թիվը, որպեսզի հնարավոր լինի հաշվարկել նաև երեխաների ներուժային թվաքանակը:

Կարևոր է նաև դիտարկել հաշմանդամություն ունեցող երեխաների առկայությունն ու թիվը: Ցանկալի է նաև կանխատեսումներ կատարել՝ ելնելով համայնքի ժողովրդագրական ցուցանիշների միտումներից: Երեխաների թվի ճշտումն անհրաժեշտ քայլ է ՆԴԿ ծառայության մոդելի ընտրության և մատուցվող ծավալների որոշման համար: Այն մեծ ազդեցություն ունի շենքային պայմանների ընտրության, խաղասենյակների կահավորման, խմբավարների քանակի, ծառայության ֆինանսավորման և այլ գործոնների վրա:

ՔԱՅԼ 2. ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այլընտրանքային ՆԴԿ ծառայություն հիմնելու համար կարևոր է գնահատել տվյալ բնակավայրում շենքային պայմանների առկայությունը, դրանց ընդհանուր վիճակը, նպատակահարմարությունը՝ ՆԴԿ ծառայություն մատուցելու տեսանկյունից, ինչպես նաև պատկերացում կազմել առկա շենքերի բարելավման, վերականգնման կամ վերանորոգման ծախսերի մասին:

Տարածքի ընտրության ժամանակ կարող են դիտարկվել համայնքային և մասնավոր սեփականություն հանդիսացող շենքերը կամ համայնքային ենթակայությամբ գործող որևէ շինության մի հատվածը:

Կարևոր է նկատի ունենալ, որ ընտրված տարածքը պետք է բավարարի որոշակի նվազագույն պահանջների, մասնավորապես՝

- բնական և արհեստական լուսավորության առկայություն,
- խմելու ջրի առկայություն կամ հնարավորություն,
- սեյսմակայունություն,
- առանձին մուտք կամ երեխաների ազատ ելումուտի համար ապահով պայմաններ (առաջին հարկ, ոչ բարձր աստիճաններ, անվտանգ տեղաշարժվելու հնարավորություն և այլն),
- հոսող ջրով ապահովված բարեկարգ զուգարանի առկայություն շենքի ներսում կամ դրսում (ոչ հեռու),
- բացօթյա ապահով խաղային տարածքի կամ խաղահրապարակի առկայություն բակային և սպորտային խաղերի համար, որոնք հարմարեցված կլինեն կամ հնարավորություն կունենան հեշտությամբ հարմարեցնելու հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին:

Այլ դեպքերում ՆԴԿ ծառայությունը կարող է տեղավորվել նաև գործող դպրոցի շենքում գտնվող մի դասարանում, և միջանցքի մի փոքր հատված կարելի է առանձնացնել հանդերձապահարանների համար (եթե դասարանը փոքր է): Այս դեպքում անհարժեշտ է նախապես համաձայնություն ձեռք բերել գույքի սեփականատիրոջ կամ օգտագործողի հետ՝ կնքելով համապատասխան պայմանագիր:

ՔԱՅԼ 3. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

■ Ծառայության մատուցման մոդելի վերաբերյալ հանրային քննարկում

Այլընտրանքային նախադպրոցական ուսուցման կարիքի գնահատումն իրականացնելուց հետո անհրաժեշտ է իրականացնել հանրային քննարկում դիտարկվող բնակավայրում, ուր բնակիչներին կներկայացվի ՆԴԿ ծառայության այլընտրանքային մոդելը: Հաշվի առնելով, որ վերջինս զգալիորեն տարբերվում է գործող ՆԴԿ ձևից՝ անհրաժեշտ է ծնողներին մանրամասն ներկայացնել մոդելի առանձնահատկությունները, մասնավորապես՝ օրվա ընթացքում ծառայության տևողությունը (3-4 ժամ), սննդի մատուցման և երեխաների ցերեկային քնի կազմակերպման բացակայությունը, խառը տարիքային կազմով խմբային պարապմունքների առանձնահատկությունները և այլն:

Նկարագրված մոդելը սննդի մատուցում չի նախատեսում: Այնուամենայնիվ, հանրային քննարկման ժամանակ կարող է դիտարկվել նաև «չոր սննդի» մատուցման հնարավորությունը:

Մասնավորապես, Սիսիան համայնքում գործող ՆԴԿ այլընտրանքային ծառայություններում, ըստ համայնքի ղեկավարի հավաստիացման, 2019թ-ին նախատեսվում է երեխաներին տրամադրել չոր նախաճաշ: Վերջինս մեծ ծանրաբեռնվածություն չի առաջացնում համայնքի բյուջեի վրա:

Ներդիր 6. ՆԴԿ այլընտրանքային ծառայությունում սնունդի մատուցման Սիսիանի օրինակը

ՆԴԿ ծառայության մոդելը քննարկելուց հետո անհրաժեշտ է քննարկել նաև առաջարկվող շենքային պայմանները: Եթե կան այլընտրանքային տարբերակներ, ապա պետք է քննարկել և ընտրել առավել նպատակահարմարը՝ հաշվի առնելով նաև ծնողների առաջարկները: Շենքը ընտրելիս կարևոր է ի նկատի ունենալ ինչպես «Քայլ 2» բաժնում թվարկված անհրաժեշտ պայմանների առկայությունը, այնպես էլ դրանց ներդրման հնարավորությունը:

Քննարկման առարկա պետք է հանդիսանան նաև ՆԴԿ ծառայության դիմաց իրականացվող վճարը և դրա չափը, ծնողների վճարունակությունը, ինչպես նաև հնարավոր արտոնությունների տրամադրման դեպքերը:

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՆԴԿ ծառայության մատուցման ժամանակ երեխաների անվտանգությունը պետք է ապահովված լինի ինչպես շենքի ներսում, այնպես էլ դրսում: Մանկապարտեզում գտնվելու ողջ ընթացքում յուրաքանչյուր երեխա պետք է գտնվի դաստիարակի տեսադաշտում:

Խաղերը, ուսումնական սարքավորումները և կահույքը չպետք է ունենան սուր եզրեր, ժանգոտ և չամրացված մասեր: Կահույքը և սարքավորումները պետք է այնպես դասավորված լինեն, որ խաղի ժամանակ երեխաներին չխանգարեն և վնասվածքներ չպատճառեն:

Էլեկտրական տաքացուցիչները պետք է դուրս լինեն երեխաների հասանելիությունից, և ոչ մի բաց էլեկտրական լար չպետք է լինի սենյակում:

Շարժական աստիճանները, սահարանները և ճոճանակները պետք է դրված լինեն դրանց համար հատուկ նախատեսված տեղերում: Բոլոր սարքավորումները պետք է լավ տեղադրված, ամրացված և ներկված լինեն: Խաղահրապարակը պետք է ծածկված լինի ավազով, խոտով կամ հատուկ ռետինե ծածկով: Թունավոր և փշոտ բույսեր չպետք է աճեն մանկապարտեզի տարածքում:

ՆԴԿ ծառայությունը պետք է ունենա արտակարգ իրավիճակների ժամանակ տարհանման (էվակուացիայի) պլան և հասանելի կրակմարիչներ: Դաստիարակը կամ նշանակված մեկ այլ մեծահասակ պետք է պատասխանատու լինի երեխաներին տարհանմանը պատրաստելու և արտակարգ իրավիճակներում նրանց առաջնորդելու համար:

Տարածքի մուտքը և ելքը պետք է կողպեքով փակված չլինեն, և ազատ ելումուտին խանգարող ոչ մի խոչընդոտ չպետք է լինի:

Ներդիր 7. Շինության և տարածքի անվտանգության ապահովում

Ծնողներին պետք է ներկայացվի ծրագրի հիմնադրման և գործարկման ընթացքում ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը:

Ծրագրի ներդրման սկզբնական փուլում ծնողները կարող են մասնակցել շինարարական աշխատանքներին, օրինակ՝ սեփական ուժերով բարեկարգել տարածքը, վերանորոգել որևէ գույք կամ խաղահրապարակը, իսկ ծառայության մատուցման ժամանակ վերջիններս կարող են կամավոր կերպով գույք կամ ֆինանսական միջոցներ

նվիրաբերել: Այս հանգամանքը կնպաստի ծառայության մատուցման որակի բարելավմանը, ինչպես նաև ծնողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը ծառայության վերահսկողության իրականացման գործում:

Մեծապես խրախուսվում է բնակիչների ակտիվ մասնակցությունը ծառայության հիմնադրման գործընթացներում, որի մանրամասները նույնպես հանրային քննարկման կարևոր հարցերից պետք է լինեն: Կարելի է նաև պարզել, թե ինչպիսի աշխատուժ է առկա և ով է պատրաստ օգնել ծառայության հիմնադրման աշխատանքների ժամանակ:

Հանրային քննարկումն անցկացվում է տվյալ համայնքում ավագանու կողմից ընդունված «Հանրային քննարկումների անցկացման կարգին» համապատասխան:

Հանրային քննարկմանն անհրաժեշտ է ապահովել թիրախային խմբի երեխաների, ինչպես նաև փոքր տարիքի երեխաներ ունեցող ծնողների, հնարավոր ապագա դաստիարակների և համայնքի վարչական ղեկավարի/ների մասնակցությունը, քանի որ վերջիններս հանդիսանում են նախադպրոցական ուսուցման ծառայության շահառուներ:

Առաջարկությունների ստացում

ՆԴԿ ծրագրի ներդրման նախաձեռնության մասին անհրաժեշտ է լայնորեն լուսաբանել՝ հնարավորություն ստեղծելով ցանկացած շահագրգիռ կողմի համար (մարզպետարան, հարևան համայնքներ, տեղական կամ տարածաշրջանային ՔՀԿ-ներ և այլն) ներկայացնելու առաջարկներ:

Թումանյան համայնքի Աթան, Ահնիձոր և Շամուտ բնակավայրերում գործող ՆԴՀ-ներում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագրի (ՄԱԶԾ ԳԷՀ ՓԴԾ) օժանդակությամբ ներդրվել են արևային ֆոտովոլտային համակարգեր: Այդ համակարգերի շնորհիվ ապահովվել է մատչելի էլեկտրաէներգիայի հասանելիություն դասասենյակների ու զուգարանների ջեռուցման, և զուգարանները տաք ջրով ապահովելու համար: Ինչպես նաև նվազեցվել է ՆԴՀ-ներում ավանդական վառարաններից հնարավոր հրդեհի և առողջությանը հասցվող ռիսկը և շրջակա միջավայրի ու կլիմայի վրա բացասական ազդեցությունը:

Համակարգերը հնարավորություն են տալիս զգալի խնայողություններ ապահովել պահպանման ծախսերի գծով (օր. էլեկտրաէներգիա) բարձրացնելով այլընտրանքային մոդելի արդյունավետությունը և օգուտ-ծախս հարաբերակցությունը:

Ներդիր 8. ՄԱԶԾ ԳԷՀ ՓԴԾ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հաջողված համագործակցության օրինակ

Առաջարկությունները կարող են մեծապես օգնել համայնքային իշխանություններին գործընթացի կազմակերպման աշխատանքներում: Ուստի շահագրգիռ կողմերից ստացված արձագանքներն ու առաջարկությունները էական նշանակություն ունեն ծառայության ներդրման, իրականացման, բարելավման, ինչպես նաև արտաքին ռեսուրսների և գործընկերների ներգրավման հարցում:

- Այլընտրանքային տարբերակների քննարկում և ծառայության մատուցման առավել նպատակահարմար մոդելի ընտրություն

Հանրային քննարկման արդյունքում՝ հնարավոր բոլոր այլընտրանքային տարբերակները բնակիչների հետ քննարկելուց, շահագրգիռ կողմերից առաջարկությունները ստանալուց և մշակելուց հետո համայնքային իշխանություններն ընտրում են այլընտրանքային ՆԴԿ ծառայություն մատուցելու առավել նպատակահարմար տարբերակը:

Վերջնական տարբերակի ընտրությունից հետո առկա հնարավոր միջոցներով (պաշտոնական վեբ-կայք, ցուցատախտակներ, տեղական մամուլ, թաղային հանդիպումներ, ՔՀԿ-ներ, համայնքային ակտիվ խմբեր և այլն) ցանկալի է տեղեկացնել հանրությանը:

Տեղադրված արևային ֆոտովոլտային համակարգերի ստորին տարածքը բարեկարգվել է և ծառայում է որպես «զրուցարան» կամ բացօթյա տարածք երեխաների համար:

ՔԱՅԼ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

■ Ծառայության ներդրման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշվի կազմում

Ծառայության մատուցման տարբերակն ընտրելուց հետո անհրաժեշտ է կազմել վերջինիս ներդրման ծախսերի նախահաշիվը, որը կներառի ինչպես շենքային պայմանների հարմարեցումը, այնպես էլ անհրաժեշտ գույքի, իրերի, պարագաների և ուսումնական նյութերի ձեռքբերումը: Նախահաշվի մեջ անհրաժեշտ է ներառել նաև դաստիարակների վերապատրաստման համար իրականացվող ծախսերը:

Ծախսային հոդված		Գումար (դրամ)
	Կապիտալ ծախսեր	
1	Նախապատրաստական աշխատանքներ	**20,000**
1.1	Տարածքի/շենքային պայմանների ուսումնասիրություն և գնահատում	10,000
1.2	Նախագծանախահաշվային փաստաթղթի կազմում	10,000
2	Շինարարական աշխատանքների իրականացում	**1,624,383**
2.1	Խմբասենյակների վերանորոգում	**1,509,872**
2.1.1	Աշխատավարձ	319,872
2.1.2	Նյութեր	1,190,000
2.2	Սանհագույցի վերանորոգում	**63,104**
2.2.1	Աշխատավարձ	13,369
2.2.2	Նյութեր	49,735
2.3	Այլ շինարարական աշխատանքներ	**51,407**
2.3.1	Աշխատավարձ	1,407
2.3.2	Նյութեր	50,000
3	Գույքի ձեռքբերում	**880,000**
3.1	Խմբասենյակների կահավորում	640,000
3.2	Ուսուցողական և դիդակտիկ նյութերի տրամադրում	240,000
4	Դաստիրակների վերապատրաստում	**2,000,000**
4.1	Վերապատրաստողների վարձատրություն	1,360,000
4.2	Դասընթացների կազմակերպչական ծախսեր	400,000
4.3	Տրանսպորտային ծախսեր	240,000
5	Վարչական ծախսեր	99,536
	Ընդամենը կապիտալ ծախսեր	**4,524,383**
	Ընթացիկ ծախսեր	
1	Աշխատավարձ	**911,458**
1.1	Դաստիրակների աշխատավարձ	909,000
1.2	Վարչական վերադիր ծախսեր	2,458
2	Կոմունալ ծախսեր	**47,040**
2.1	Էլ. էներգիա	29,400
2.2	Ջուր	5,880
2.3	Գազ	5,880
2.4	Աղբահանություն	5,880
3	Դաստիարակների ընթացիկ վերապատրաստում	**25,760**
3.1	Վերապատրաստողների վարձատրություն	20,000
3.2	Դասընթացների կազմակերպչական ծախսեր	3,840
3.3	Տրանսպորտային ծախսեր	1,920
4	Գույքի և նյութերի ընթացիկ ձեռքբերում	**110,697**
4.1	Խմբասենյակների կահույք	28,286
4.2	Ուսուցողական և դիդակտիկ նյութեր	26,000
4.3	Ընթացիկ վերանորոգմա աշխատանքներ	56,411
	Ընդամենը ընթացիկ ծախսեր	**1,094,955**

Գծապատկեր 1. Ծառայության ներդրման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշվի օրինակ

Նշված նախահաշիվը կազմվում է համայնքի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից:

Հաշվարկները կատարելու համար առաջարկվում է օգտվել սույն Ուղեցույցին կից օրինակելի հաշվիչ գործիքից *(տես՝ CD սկավառակ)*:

■ Ծառայության պահպանման համար անհրաժեշտ տարեկան ծախսերի նախահաշվի կազմում

Անհրաժեշտ է կազմել նաև ծառայության մատուցման տարեկան ծախսերի նախահաշիվը, որը կներառի վարչական ծախսերը, կոմունալ ծառայությունների և գույքի պահպանման ու թարմացման ծախսերը, դաստիարակների վերապատրաստման և գրականության ձեռք բերման ծախսերը:

Նշված նախահաշիվը կազմվում է համայնքի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից:

Հաշվարկները կատարելու համար նույնպես առաջարկվում է օգտվել սույն Ուղեցույցին կից օրինակելի հաշվիչ գործիքից *(տես՝ CD սկավառակ)*:

■ Համայնքի ավագանու որոշման նախագծերի կազմում և իրավական հիմքերի ապահովում

Բնակավայրում այլընտրանքային ՆԴԿ ծառայության մատուցման համար անհրաժեշտ են իրավական հիմքեր, որոնք ստեղծվում են համայնքի ավագանու կողմից՝ համապատասխան որոշումներ ընդունելով: Այդ որոշումները հնարավորություն են տալիս համայնքի ղեկավարին կազմակերպել ծառայության մատուցումը:

ՀՈԴՎԱԾ 18. Համայնքի ավագանու լիազորությունները

1. Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝

---

18) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
19) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

Ներդիր 9. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 16.01.2018թ. խմբ.

Համայնքի ավագանու որոշումների նախագծերը անհրաժեշտ է կազմել հետևյալ ուղղություններով՝

- այլընտրանքային ՆԴԿ ծառայության մատուցման վերաբերյալ որոշման ընդունում,
- համայնքի հնգամյա զարգացման ծրագրում (ՀՀԶԾ) համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացում,
- տարեկան աշխատանքային պլանում (ՏԱՊ) համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացում,
- համայնքի տարեկան բյուջեում համապատասխան փոփոխությունների իրականացում,
- ՆԴԿ ծառայության համար տվյալ բնակավայրում տեղական վճարների դրույքաչափի սահմանում (հաջորդ տարվա համար),
- համայնքի ավագանու որոշումներով սահմանված գործողությունների կատարման պատասխանատուի նշանակում՝ (նպատակահարմար է բնակավայրի վարչական ղեկավարը),
- գործող ՆՈՒՀ-ի կանոնադրության փոփոխություն,
- գործող ՆՈՒՀ-ի հաստիքացուցակի փոփոխություն,
- այլ (ըստ անհրաժեշտության):

ՆՈՒՀ-ի Կանոնադրության փոփոխությունը վերաբերում է ծառայության անվանման, դիտարկվող բնակավայրում ծառայության իրականացման վայրի վերաբերյալ լրացումներին, որոնք կատարվում են գործող կանոնադրության համապատասխան բաժիններում:

Համայնքի ավագանու վերոնշյալ որոշումները կազմվում են համայնքի աշխատակազմի իրավաբանական, ֆինանսական, շին. բարեկարգման, կրթության ոլորտները համակարգող ստորաբաժանումների կողմից՝ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ:

ՔԱՅԼ 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

- Համայնքի ավագանու նիստի անցկացում, որոշումների ընդունում
- Իրազեկում արդյունքների մասին

Քայլ 4-ում նշված ավագանու որոշման նախագծերն ընդգրկվում են համայնքի ավագանու նիստի օրակարգում, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում անց է կացվում համայնքի ավագանու հերթական կամ արտահերթ նիստ:

Համայնքի ավագանու նիստի ժամանակ համայնքի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ համայնքի այլ պաշտոնյա, հանգամանորեն ավագանուն է ներկայացնում այլընտրանքային ՆԴԿ ծառայության մոդելը, դրա մատուցման՝ հանրային քննարկման արդյունքում ընտրված տարբերակը, անհրաժեշտ ծախսերն ու համայնքի տարեկան բյուջեի վրա ազդեցությունը, ինչպես նաև պատասխանում է ավագանու անդամների կողմից բարձրացված հարցերին:

Ավագանու կողմից կայացված որոշումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակվում են, իսկ թիրախային բնակավայրի բնակիչների համար իրազեկումն իրականացնում է նաև բնակավայրի վարչական ղեկավարը:

Համայնքի ավագանու կողմից կայացված որոշումների հիման վրա համայնքի ղեկավարը նախաձեռնում է ծրագրի իրականացման աշխատանքները:

- Համայնքի ավագանու որոշումների օրինակներ.

Թումանյանի բազմաբնակավայր համայնքի 5 բնակավայրերում նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայությունների մատուցումը 2017թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ապահովելու նպատակով, համայնքի ավագանու և ղեկավարի կողմից կայացվել են մի շարք որոշումներ: Մասնավորապես.

1) Թումանյան համայնքի ավագանու 22.08.2017թ. թիվ 29-Ա որոշմամբ հաստատվել է «Թումանյան քաղաքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների նոր թվաքանակը, նոր հաստիքացուցակը և պաշտոնային նոր դրույքաչափերը՝ ուժի մեջ մտնելով 2017թ. սեպտեմբերի 1-ից:

Այս որոշմամբ Թումանյան քաղաքի մանկապարտեզի նախկին 5.37 միավոր հաստիքներին ավելացվել է դաստիարակի ևս 5 հաստիք (յուրաքանչյուրը 78,000Դ պաշտոնային դրույքաչափով) Աթանի, Ահնիձորի, Շամուտի, Մարցի և Թումանյան քաղաքի նախադպրոցական 3-6 տարեկան երեխաների թվով 5 խմբերին նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայություններ մատուցելու համար: Այդ հաստիքները զբաղեցրել են թվով 9 դաստիարակներ՝ ըստ հետևյալ բնակավայրերի՝ Աթան՝ 2 (0.5-ական դրույքով), Ահնիձոր՝ 2 (0.5-ական դրույքով), Շամուտ՝ 2 (0.5-ական դրույքով), Մարց՝2 (0.5-ական դրույքով), Թումանյան քաղաք՝1 (1 դրույքով):

2) Համաձայն համայնքի ավագանու կողմից կայացված վերոնշյալ որոշման, համայնքի ղեկավարի 22.08.2017թ. որոշմամբ հաստատվել են «Թումանյան քաղ. ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվում անհրաժեշտ փոփոխությունները՝ համաձայն այդ ՀՈԱԿ-ի նոր հաստիքացուցակի և աշխատողների պաշտոնային նոր դրույքաչափերի:

Այս որոշմամբ՝ Աթանում, Ահնիձորում, Շամուտում, Մարցում և Թումանյան քաղաքում նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայություններ մատուցող դաստիարակների ավելացված 5 նոր հաստիքների համար ամսական աշխատավարձը կազմում է՝ 78,000Դ x 5 հաստիք = 390,000Դ, իսկ 2017թ. սեպտեմբեր — դեկտեմբեր 4 ամիսների համար նախատեսվող աշխատավարձը կազմել է՝ 390,000Դ x 4 ամիս = 1,560,000Դ: Այս գումարը կազմում է «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային հոդվածով համայնքի 2017թ. բյուջեում ավելացվող գումարը:

Բացի դաստիարակների աշխատանքի վարձատրությունից, յուրաքանչյուր ամիս նախատեսվել է նաև 20,000Դ ավելացվող գումար «Էներգետիկ ծառայություններ» բյուջետային հոդվածով: 2017թ. սեպտեմբեր — դեկտեմբեր 4 ամիսների համար նախատեսվող գումարը կազմել է՝ 20,000Դ x 4 ամիս = 80,000Դ:

«Թումանյան քաղ. ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվում 4 ամիսների համար ավելացվող ընդհանուր գումարը կազմում է՝ 1,560,000Դ+ 80,000Դ = 1,640,000Դ, իսկ յուրաքանչյուր ամսվա համար ավելացվող ընդհանուր գումարը՝ 1,640,000Դ / 4 ամիս = 410,000Դ:

3) Թումանյան համայնքի ավագանու 22.08.2017թ. թիվ 25-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել համայնքի 2017թ. բյուջեում, ծախսային հետևյալ ուղղություններով:

Հատված 2-ում՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման (Բաժին 09 Կրթություն, Խումբ 1 Դաս 1 Նախադպրոցական կրթություն, Տող 2911), վարչական և ընդհանուր բյուջեի ծախսերն ավելացվել են՝ 1,640.0 հազ. ՀՀ դրամով՝ դառնալով՝ 20,555.0 հազ. ՀՀ դրամ,

Հատված 3-ում, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման (ընթացիկ ծախսեր, Տողեր՝ 4050-4772, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, Տողեր՝ 5000-5441), վարչական և ընդհանուր բյուջեներում կատարվել են փոփոխություններ բյուջետային հետևյալ հոդվածներում՝

«Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բյուջետային հոդվածի գումարն ավելացվել է 1,560.0 հազ. ՀՀ դրամով՝ դառնալով 42,200.0 հազ. ՀՀ դրամ,

«Էներգետիկ ծառայություններ» բյուջետային հոդվածի գումարն ավելացվել է 80.0 հազ. դրամով՝ դառնալով 4,015.0 հազ. ՀՀ դրամ:

Հատված 6-ում, ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգումների, վարչական և ընդհանուր բյուջեների համապատասխան հոդվածներում կատարվել են վերոնշյալ փոփոխություններին համապատասխան լրացումներ և փոփոխություններ:

Թումանյանի բազմաբնակավայր համայնքի 5 բնակավայրերում նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայությունների մատուցումը 2018թ. ընթացքում ապահովելու համար «Թումանյան քաղ. ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվում ավելացվող գումարը կկազմի՝

410.0 հազ. դրամ x 12 ամիս = 4 920.0 հազ. ՀՀ դրամ:

Նշված գործընթացներն իրականացվել և համապատասխան իրավական ակտերն ընդունվել են նաև 2018թ-ի բյուջետային տարվա համար:

Պահպանման ծախսերը տեսանելի կերպով կնվազեն արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրումից և գործարկումից հետո:

ՔԱՅԼ 6. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄ

Համայնքի ավագանու կողմից Քայլ 5-ում նշված որոշումներն ընդունելուց հետո անհրաժեշտ է, ըստ գործողությունների հաջորդականության տրամաբանության, ձեռնարկել դրանց իրականացումը: Համայնքի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումները, համայնքի ղեկավարի կողմից սահմանված ժամանակացույցի համաձայն, սկսում են իրականացնել համայնքի ավագանու կայացրած որոշումները.

- աշխատակազմի շին. բարեկարգման բաժնի կողմից շենքային պայմանների անհրաժեշտ նորոգման և հարմարեցման աշխատանքների կազմակերպում, հարակից տարածքների բարեկարգման կազմակերպում,
- աշխատակազմի կրթության բաժնի կողմից դաստիարակների կադրային համալրման հարցերի կազմակերպում, մրցույթի հայտարարում, մրցույթի անցկացում, ընտրություն, հաղթողների վերապատրաստում, պարապմունքների մշտադիտարկում և այլն,
- աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից անհրաժեշտ գույքի և ուսումնադիդակտիկ նյութերի ձեռքբերման գործընթացների և իրականացվող աշխատանքների ֆինանսավորման հարցերի կազմակերպում, գնումների ընթացակարգի ապահովում,
- աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից գործող ՆՈՒՀ-ի փաստաթղթային նոր ձևակերպումների կազմում, պետական ռեգիստրի գործակալությանը օրենքով սահմանված փաստաթղթերի տրամադրում, հանձնման ընդունման փաստաթղթերի պատրաստում:

ՔԱՅԼ 7. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

■ Խմբասենյակի/ների հանդիսավոր բացում

Քայլ 6-ում նախանշված գործողություններն ամբողջությամբ իրականացնելուց հետո ցանկալի է կազմակերպել այլընտրանքային ՆԴԿ խմբասենյակի(ների) բացում՝ հանդիսավոր արարողությամբ, ուր հրավիրված կլինեն ներկայացուցիչներ տարբեր շահագրգիռ կողմերից և ոչ միայն: Ծառայության գործարկման նմանօրինակ մեկնարկը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ այն ծնողների համար, որոնք դեռևս հստակ չեն կողմնորոշվել տվյալ ծառայությունից օգտվելու հարցում: Նախադպրոցական հաստատությունում հնարավորինս մեծ թվով երեխաների ընդգրկումը բխում է համայնքային ընդհանուր շահերից, քանի որ դա նպաստում է երեխայի վաղ մանկության զարգացմանը:

Բացման հանդիսավոր արարողությունը հրաշալի առիթ է նաև շնորհակալություն հայտնելու այն գործընկեր կազմակերպություններին և անհատներին, որոնք իրենց ներդրումն են ունեցել համայնքում ծառայությունը հիմնելու և գործարկելու գործում: Երախտագիտության նմանօրինակ դրսևորումը մեծ խթան կհանդիսանա նաև հետագայում նոր գործընկերության համար:

Մարցի դպրոցում ՆԴԿ այլընտրանքային ծառայության մեկնարկի հանդիսավոր արարողություն

■ Հնարավորինս լայն լսարանի համար լուսաբանում (հաջողված փորձ)

Անչափ կարևոր է իրականացնել լուսաբանում հնարավորինս լայն լսարանի համար՝ որպես ծառայության մատուցման հաջողված փորձ: Սա «կենդանի ուղեցույց» կհանդիսանա այն համայնքների համար, որոնք ևս ունեն փոքր բնակավայրերում ՆԴԿ կազմակերպելու խնդիր: ԶԼՄ-ների կողմից դրական լուսաբանումը մեծապես կբարձրացնի համայնքի հեղինակությունը ոչ միայն տվյալ մարզում, այլև դրա սահմաններից դուրս:

Լուսաբանումը յուրատեսակ հաշվետվություն է նաև հանրության առաջ ծրագրի իրականացման վերաբերյալ:

ՔԱՅԼ 7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

- Աշխատակազմի կրթության և ֆինանսական բաժինների կողմից մոնիթորինգի անցկացում՝ մատուցվող ծառայության որակի և իրականացվող ծախսումների վերաբերյալ

Բնակավայրում ծառայության գործարկումից հետո անհրաժեշտ է իրականացնել շարունակական մշտադիտարկում համայնքի աշխատակազմի կողմից, ինչը թույլ կտա անընդհատ հսկողության տակ պահել բնակավայրի բնակիչների համար անչափ կարևոր այս ծառայության որակյալ մատուցումը:

Մոնիթորինգը պետք է իրականացնել ինչպես ֆինանսական գործառնությունների մասով, այնպես էլ ՆԴԿ մատուցման պատշաճ որակի ապահովման նկատառումով ներառյալ դաստիարակի լրացուցիչ վերապատրաստման կարիքի բացահայտումը: Մոնիթորինգի օբյեկտ պետք է դառնան նաև շենքային պայմանների սանիտարահիգիենիկ իրավիճակը և անվտանգության կանոնների պահպանումը:

Անհրաժեշտ է նաև հստակ վիճակագրություն առ այն, թե տարեկան քանի երեխա է փաստացի օգտվում այդ ծառայություններից:

Մոնիթորինգի ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ծնողների կարծիքի ուսումնասիրություն: Վերջինս հնարավորություն կտա առավել հասցեական արձագանքել ծառայության մատուցման ընթացքում ի հայտ եկած խնդիրներին:

- ### Ընթացիկ մասնագիտական մոնիթորինգի անցկացում ՆՈՒՀ-ի ղեկավարի կողմից

Հաշվի առնելով ծառայության առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է մշտադիտարկել նաև դաստիարակների մասնագիտական պատրաստվածությունը: Արդյո՞ք մատուցվող ծառայությունը համապատասխանում է «Փոքր համայնքներում այլընտրանքային ծառայությունների կազմակերպումը 3-6 տարեկան երեխաների համար» մեթոդաբանությամբ սահմանված պահանջներին, կարողանու՞մ են դաստիարակները հավասար կերպով արձագանքել 3-ից 6 տարեկան երեխաների կարիքներին, տիրապետու՞մ են նրանք յուրաքանչյուր տարիքային խմբին ցուցաբերվող մոտեցումներին և այլն:

- ### Համառոտ զեկույցի ներկայացում

Մոնիթորինգի արդյունքները, ՆՈՒՀ-ի ղեկավարի, դաստիարակների առաջարկությունների և առարկությունների հետ միասին, ներկայացվում են համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարը տարեկան կտրվածքով տեղեկություններ է հաղորդում համայնքի ավագանուն այլընտրանքային ՆԴԿ ծառայության վերաբերյալ:

- ### Առաջացած խնդիրների պարբերաբար քննարկում

Ծառայության մատուցման ընթացքում առաջացած բոլոր խնդիրները աշխատանքային կարգով քննարկվում են ինչպես աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում, այնպես էլ համայնքի ղեկավարի հետ՝ հնարավոր լավագույն լուծում գտնելու նպատակով:

Քայլ 5-ում համայնքի ավագանու որոշման նախագծերը կազմելիս, ինչպես նշվել է, անհրաժեշտ փոփոխություններ են կատարվում նաև ՀՀԶԾ-ում և ՏԱՊ-ում:

Այս քայլում իրականացվող մոնիթորինգը մեծ ծավալի տեղեկություններով է ապահովում տեղական իշխանություններին և համայնքի աշխատակազմին համայնքի հաջորդ՝ հնգամյա զարգացման ծրագիրը կազմելու և, ըստ այդմ էլ, անհրաժեշտ միջոցառումները և ֆինանսական միջոցները այլընտրանքային ՆԴԿ ծառայությունը պլանավորելու գործում:

Պատշաճ կերպով իրականացված մոնիթորինգը մեծապես կարող է օգնել համայնքին հետագայում խուսափել թերացումներից, որոնք

տեղ են գտել ընթացիկ ժամանակաշրջանում, և արդեն բարեփոխված և լրացված գործողությունների ցանկով հանդես գալ պլանավորվող հաջորդ ժամանակաշրջանում:

Ցանկալի է նաև մշակել համայնքի Տեղական սոցիալական ծրագիրը[3] (ՏՍԾ)՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առողջական, սոցիալական կամ այլ խնդիրների պատճառով համայնքում երեխաները կարող են դուրս մնալ կրթությունից: Նման միջոլորտային խնդիրների համալիր լուծման համար անհրաժեշտ է, որ մեթոդաբանության համաձայն մշակվի համապատասխան սոցիալական ծրագիրը՝ հիմք ընդունելով ձեռք բերված տվյալները:

[3] ՀՀ տարածքային կառավարման նախարարի 26.12.12 թ. N 178-Ա և
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 24.12.12թ. N 124-Ա/1 համատեղ հրաման

© UNICEF Armenia/2018/Malkhasyan

© UNICEF Armenia/2018/Malkhasyan

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ՀԻՄՆԵԼ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Երևան 2018

Չափսը՝ 64x90 1/16: Ծավալը՝ 2 տպ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատան տպարանում:
Երևան, Բաղրամյան 3:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ